# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
# GENERAL CHARACTERISTIC OF THE REPUBLIC OFARMENIA

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## REPUBLIC OF ARMENIA




Մայրաքաղաքը՝ ԵՐԵՎԱՆ

**The Capital - YEREVAN**



Մաշտոցի պողոտան Մատենադարանից
**Moshtots Avenue from Matenadaran**

Երկիրը գտնվում է Ասիայի հարավ-արևմուտքում, գրավում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան հատվածը` Կովկասի և Առաջավոր Ասիայի միջև (Կուր և Արաքս գետերի միջին հոսանքների միջգետային տարածքը):

Երկիրն ընկած է հս.լ $38^0$ $50^1$ - $41^0 18^1$-ը և ալ.ե.$43^0 27^1$ - $46^0$ $37^1$-ի միջև:

Տարածքը ` 29743 կմ$^2$

Գյուղատնտեսական հողատեսքերը կազմում են տարածքի 46,8%-ը, Լեռները, բարձրավանդակներն ու այլ հողատեսքերը` 34,9%, Անտառները` 12,7%,

The country is situated in southwestern part of Asia, occupies the North-East of Armenian plateau - between Caucasus and Nearest Asia (the territory between the middle flows of the rivers Kur and Araks).

The country is located in the latitude of $38^0$ $50^1$ - $41^0$ $18^1$N. and longitude of $43^0$ $27^1$ - $46^0$ $37^1$E

**Area - 29743 km$^2$**

Agricultural land comprise 46,8%.
Maountains, plateuax and other land - 34,9%,
Forest - 12,7%,
Water surface - 5,6%:

Ջրային տարածքները` 5,6%:



**Լեռնային պատկեր Գառնու ձորում**
**Mountainous scenery in Garni ravine**

**Պետական սահմանը**
Հյուսիսում` Վրաստանի հետ,
Արևելքում` Ադրբեջանի հետ,
Արևմուտքում և հարավ-արևմուտքում`
Թուրքիայի հետ,
Հարավում` Իրանի հետ:

**Ամենաերկար ձգվածությունը** հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք կազմում է 360 կմ, արևմուտքից արևելք` 200 կմ:

**Ամենախոր իջվածքը** Դեբեդ գետի կիրճն է` 390 մ,

**State border**
It the North with Georgia,
It the East with Azerbaijan,
It the West and South-West with Turkey,
It the South with Iran.

**The longest extension** from North-West to South-East comprises 360 km, from West to East - 200 km.

**The deepest landslide** is the Debed Canyon - 390 m,



Արագած լեռան գագաթը
**The top of Aragats mountain**

Մշտական բնակչության թվաքանակը 2002թ. հունվարի 1 -ի դրությամբ կազմել է 3800.0 հազ.մարդ[1],

**The permanent population** as of 1 January 2002 is 3800.0 ths. people[1],

**Բնակչության խտությունը** մեկ կմ$^2$ վրա կազմել է 128 մարդ:

**The population density** per km$^2$ is 128 people.

**Ամենաբարձր կետը**՝ Արագած լեռան գագաթն է (4090 մ),
բարձր կետերը.
Կապուտջուղ՝ 3906 մ,

**The highest elevation** is the peak of mount Aragats (4090 m),
the high elevations:
Kaputdjugh - 3906 m,

---

[1] *Առկա բնակչության թվաքանակը միգրացիայի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են միգրացիոն տեղաշարժերի թերիաշվառման հետևանքով: Միգրացիայի մի մասն արտացոլող առավել արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Միգրացիայի չափերի մասին առավել արժանահավատ տվյալներ կստացվեն 2001թ. հոկտեմբերի 10-19-ը Հայաստանում անցկացված մարդահամարի արդյունքներով միայն:*
*Number of de fakto population is significantly small. Reliable data on de fakto population number are missing due to migration undercount. More reliable data reflecting a part of migration are available only by subtracting the indicators on departures and arrivals via air transport. More reliable data on migration size will be available only by the rezults of Population Census of Armenia Conducted in october 10-19, 2001.*

Աժդահակ՝ 3598 մ,
Սպիտակասար՝ 3555 մ,
Վարդենիս՝ 3522 մ:

**Ամենաերկար գետերը**

Արաքս՝ ՀՀ տարածքում 158 կմ (ընդհանուր երկարությունը՝ 1072 կմ),
Ախուրյան՝ 186 կմ,
Որոտան՝ ՀՀ տարածքում 119 կմ (ընդհանուր երկարությունը՝ 179 կմ),
Դեբեդ՝152 կմ (ընդհանուր երկարությունը՝ 178 կմ),
Հրազդան՝ 141 կմ,
Աղստև՝ 99 կմ (ընդհանուր երկարությունը՝ 133 կմ):

Azhdahak - 3598 m,
Spitakasar - 3555 m,
Vardenis - 3522 m.

**The longest rivers**

Araks – in the territory of Armenia - 158 km (the total length - 1072 km),
Akhuryan 186 km,
Vorotan – in the territory of Armenia - 119 km (the total length - 179 km),
Debed - 152 km (the total length - 178 km),
Hrazdan - 141 km,
Aghstev - 99 km (the total length - 133 km).



**Սևանա լիճը**
**The Lake Sevan**

**Լճեր**

*Ամենամեծը* Սևանա լիճն է՝ 1239 կմ$^2$ (բարձրությունը ծովի մակերևույթից 1898 մ),

**Lakes**

*The largest lake is* Sevan - 1239 km$^2$ (the height above sea level -

Արփի՝ 22.0 կմ$^2$ (բարձրությունը ծովի մակերևույթից 2025 մ),
Ակնա՝ 0.53 կմ$^2$ (բարձրությունը ծովի մակերևույթից 3030 մ),
Սև՝ 2.0 կմ$^2$ (բարձրությունը ծովի մակերևույթից 2666 մ)։

1898 m),
Arpi - 22.0 km$^2$ (the height above sea level - 2025 m),
Akna - 0.53 km$^2$ (the height above sea level - 3030 m),
Sev - 2.0 km$^2$ (the height above sea level - 2666 m).

## Միջին ջերմաստիճանը

*(ըստ ՀՀ հիդրոօդերևութաբանության վարչության տվյալների)*
հունվարին -6.8 $^0$C
*(ամենացածրը արձանագրվել է մինչև -30$^0$ C),*
հուլիսին +20.8 $^0$C
*(ամենաբարձրը արձանագրվել է մինչև +43$^0$ C)։*

## The average temperature

*(according to data of the Hydro-meteorological Department of RA)*
in January - 6.8 $^0$C
*(the lowest one was registered up to minus 30$^0$ C),*
in July - plus 20.8 $^0$C
*(the highest one was registered up to plus 43$^0$ C).*

## ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ
## URBAN COMMUNITICS OF THE RA

*(2002թ. հունվարի 1-ի դրությամբ)*
*(as of January 1, 2001)*

| | ՀՀ մշտական բնակչության թվաքանակը , 1000 մարդ **Number of de jure population, 1000 people** | Հեռավորությունը մինչև Երևան, կմ **Distance to Yerevan, km** |
|---|---|---|
| Երևան **Yerevan** | 1246.1 | - |
| Գյումրի **Gyumri** | 210.1 | 116 |
| Վանաձոր **Vanadzor** | 170.8 | 120 |
| Վաղարշապատ **Vagharshapat** | 65.7 | 21 |
| Հրազդան **Hrazdan** | 63.4 | 50 |
| Աբովյան **Abovyan** | 60.6 | 16 |
| Կապան **Kapan** | 46.5 | 316 |

| | ՀՀ մշտական բնակչության թվաքանակը , 1000 մարդ **Number of de jure population, 1000 people** | Հեռավորությունը մինչև Երևան, կմ **Distance to Yerevan, km** |
|---|---|---|
| Արմավիր **Armavir** | 45.1 | 48 |
| Չարենցավան **Charentsavan** | 36.1 | 38 |
| Արտաշատ **Artashat** | 35.1 | 29 |
| Գավառ **Gavar** | 34.0 | 98 |
| Սևան **Sevan** | 31.0 | 66 |
| Դիլիջան **Dilijan** | 30.7 | 101 |
| Աշտարակ **Ashtarak** | 29.8 | 20 |
| Գորիս **Goris** | 29.4 | 246 |
| Ալավերդի **Alaverdi** | 24.4 | 167 |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 1):

Հայաստանի Հանրապետության պետական անկախության հռչակագիրն ընդունվել է 1991թ. սեպտեմբերի 21-ին, նույն թվականի դեկտեմբերի 21-ին Հայաստանը դարձել է

## THE STATE STRUCTURE OF THE REPUBLIC OF ARMENIA

The Republic of Armenia is an independent, democratic, public and rule of law state (Article 1, Chapter 1, RA Constitution).

The declaration on state independence of the Republic of Armenia was adopted on 21 September 1991; on 21 December of the same year Armenia became a member of the CIS; on 2 March

ԱՊՀ անդամ, 1992թ. մարտի 2-ին՝ ՄԱԿ-ի անդամ, իսկ 2001թ. հունվարի 25-ին՝ Եվրախորհրդի անդամ:

ՀՀ իշխանությունը պատկանում է ժողովրդին: Հանրապետության նախագահը երկրի անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորն է: Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր իշխանությունն իրականացնում է ազգային ժողովը:

Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 2):

Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների տարանջատման սկզբունքի հիման վրա (ՀՀ Սահմանադրություն, գլուխ 1, հոդված 5):

Պետական լեզուն հայերենն է, որը պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին, ազգային արժույթը՝ դրամն է, որը շրջանառության մեջ է դրվել 1993թ. նոյեմբերին:

1992 – a Member of United Nations; and on 25 **January** 2001 – a member of the Council of Europe.

In the Republic of Armenia the power belongs to the people. The president of the Republic is guarantor for the country independence, territorial integrity and security. In the Republic of Armenia the legislative power is implemented by the National Assembly.

The people implement its power through free elections, referendums, as well as state and local self-government bodies and officials (Article 2, Chapter 1, RA Constitution).

The state power is implemented in compliance with the Constitution and laws based on the principle distinguishing the legislative, executive and judicial powers (Article 5, Chapter 1, RA Constitution):

The state language is Armenian, which is one of the Indo-European languages, the national currency is dram, which has been circulated since November 1993.

## NON-COMMERSIAL LEGAL PERSONS REGISTERED IN THE MINISTERY OF YUSTICE OF RA

*(2002թ. հունվարի 1-ի դրությամբ)*
*(as of 1 January 2002)*

| Ոչ առևտրային իրավաբանական անձինք<br>**Non-commersial legal persons** | Քանակը<br>**Number** |
|---|---|
| Կուսակցություններ<br>**Parties** | 107 |
| Հասարակական կազմակերպություններ<br>**Public organizations** | 2756 |
| Իրավաբանական անձանց միություններ<br>**Unions of legal Persons** | 62 |
| Արհեստակցական կազմակերպություններ<br>**Trede union organizations** | 159 |
| Հիմնադրամներ<br>*(39 հիմնադրամ գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրի տարածքային բաժինների կողմից)*<br>**Funds**<br>*(39 funds were registered by the territorial divisions of the Stat Register of the Ministry of Yustice of RA)* | 279 |
| Լրատվամիջոցներ<br>**Mass media** | 1205 |
| Սպառողական կոոպերատիվներ<br>**Consumer cooperatives** | 640 |

## «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՇՎՈՂ ՏՈՆԵՐԻ ԵՎ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԸ

## HOLIDAYS AND REMEMBRANCE DAYS CELEBATING IN THE REPUBLIC OF ARMENIA ESTABLISHED BY THE RA LAW "ON HOLIDAYS AND REMEMBRANCE DAYS IN THE REPUBLIC OF ARMENIA"

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ծննդյան տոներ եվ Ամանոր<br>**Christmas and New Year** | Դեկտեմբերի 31,<br>Հունվար 1,2,6<br>December 31,<br>January 1,2,6 | Ոչ աշխատանքային օրեր<br>Not working days |
| 2 | Բանակի օր<br>**Army Day** | Հունվար 28<br>January 28 | Աշխատանքային օր<br>Working day |
| 3 | Կանանց տոն<br>**Women's Day** | Մարտ 8<br>March 8 | Ոչ աշխատանքային օր<br>Not working day |
| 4 | Մայրության, գեղեցկության և սիրո տոն<br>**Motherhood, Beauty and Love Holiday** | Ապրիլ 7<br>April 7 | Աշխատանքային օր<br>Working day |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | Ցեղասպանության զոհերի հիշատակի օր<br>**Remembrance Genocide Victims' Day** | Ապրիլի 24<br>April 24 | Ոչ աշխատանքային օր<br>Not working day |
| 6 | Աշխատանքի օր<br>**Labour Day** | Մայիսի 1<br>May 1 | Ոչ աշխատանքային օր<br>Not working day |
| 7 | Երկրապահի օր<br>**Motherland Defender's Day** | Մայիսի 8<br>May 8 | Աշխատանքային օր<br>Working day |
| 8 | Հաղթանակի և խաղաղության տոն<br>**Victory and Peace Day** | Մայիս 9<br>May 9 | Ոչ աշխատանքային օր<br>Not working day |
| 9 | Հանրապետության տոն<br>**Republic Holiday** | Մայիս 28<br>May 28 | Ոչ աշխատանքային օր<br>Not working day |
| 10 | Երեխաների իրավունքների պաշտպանության օր<br>**Children's Rights Protection Day** | Հունիսի 1<br>June 1 | Աշխատանքային օր<br>Working day |
| 11 | Սահմանադրության օր<br>**Constitution Day** | Հուլիսի 5<br>July 5 | Ոչ աշխատանքային օր<br>Not working day |
| 12 | Գիտելիքի, գրի և դպրության օր<br>**Knowledge, letters and literature Day** | Սեպտեմբերի 1<br>September 1 | Աշխատանքային օր<br>Working day |
| 13 | Անկախության օր<br>**Independence Day** | Սեպտեմբերի 21<br>September 21 | Ոչ աշխատանքային օր<br>Not working day |
| 14 | Թարգմանչաց տոն<br>**Rendering Day** | Հոկտեմբերի II շաբաթ օրը<br>On the second day of October | Աշխատանքային օր<br>Working day |
| 15 | Երկրաշարժի զոհերի հիշատակի օր<br>**Remembrance Earthquake Victims' Day** | Դեկտեմբերի 7<br>December 7 | Աշխատանքային օր<br>Working day |
| 16 | Սուրբ Վարդանանց տոն՝ բարի գործի ու ազգային տուրքի օր<br>**St Vardanants Day: good deed and national homage Day** | Սուրբ Զատկից 8 շաբաթ առաջ՝ հինգշաբթի օր<br>On Thursday, 8 weeks before St. Easter | Աշխատանքային օր<br>Working day |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ
## ADMINISTRATIVE AND TERRITORIAL DIVISION OF THE REPUBLIC OF ARMENIA




## ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԻ
## RA ADMINISTRATIVE-TERRITORIAL DIVISION BY MARZES

*(2002թ. հունվարի 1-ի դրությամբ)*
*(as of January 1, 2002)*

| Մարզեր **Marzes** | Համայնքների թիվը **Number of communities** | | | |
|---|---|---|---|---|
| | ընդամենը **total** | քաղաքային **urban** | թաղային **district** | գյուղական **rural** |
| Հայաստանի Հանրապետություն **Republic of Armenia** | 930 | 47 | 12 | 871 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| ք. Երևան<br>**Yerevan** | 12 | - | 12 | - |
| Արագածոտն<br>**Aragatsotn** | 114 | 3 | - | 111 |
| Արարատ<br>**Ararat** | 97 | 4 | - | 93 |
| Արմավիր<br>**Armavir** | 97 | 3 | - | 94 |
| Գեղարքունիք<br>**Gegharkunik** | 92 | 5 | - | 87 |
| Լոռի<br>**Lori** | 113 | 8 | - | 105 |
| Կոտայք<br>**Kotayk** | 67 | 7 | - | 60 |
| Շիրակ<br>**Shirak** | 119 | 3 | - | 116 |
| Սյունիք<br>**Syunik** | 113 | 7 | - | 106 |
| Վայոց ձոր<br>**Vayots dzor** | 44 | 3 | - | 41 |
| Տավուշ<br>**Tavush** | 62 | 4 | - | 58 |

## ՀՀ ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ

## TERRITORY AND POPULATION OF RA BY ADMINISTRATIVE AND TERRITORIAL DIVISION

| Մարզեր<br>**Marzes** | Տարածքը, կմ$^2$<br>**Territory, km$^2$** | ՀՀ մշտական բնակչության թվաքանակը (2002թ. հունվարի 1-ի դրությամբ), 1000 մարդ[1]<br>**Number of RA de jure population (as of January 1, 2002), 1000 persons[1]** | | |
|---|---|---|---|---|
| | | ընդամենը<br>**total** | քաղաքային<br>**urban** | գյուղական<br>**rural** |

[1] *Տես՝ էջ 8-ի տողատակի հղումը:*
*See the footnote on the page 8.*

| | | ՀՀ մշտական բնակչության թվաքանակը (2002թ. հունվարի 1-ի դրությամբ), 1000 մարդ[1] **Number of RA de jure population (as of January 1, 2002), 1000 persons[1]** | | |
|---|---|---|---|---|
| Հայաստանի Հանրապետություն **Republic of Armenia** | 29743 | 3800.0 | 2529.0 | 1271.0 |
| ք. Երևան **Yerevan** | 227 | 1246.1 | 1246.1 | - |
| Արագածոտն **Aragatsotn** | 2753 | 168.1 | 47.0 | 121.1 |
| Արարատ **Ararat** | 2096 | 311.4 | 99.1 | 212.3 |
| Արմավիր **Armavir** | 1242 | 323.3 | 123.2 | 200.1 |
| Գեղարքունիք **Gegharkunik** | 5348[2] | 278.6 | 102.4 | 176.2 |
| Լոռի **Lori** | 3789 | 392.3 | 262.7 | 129.6 |
| Կոտայք **Kotayk** | 2089 | 328.9 | 200.3 | 128.6 |
| Շիրակ **Shirak** | 2681 | 361.4 | 242.1 | 119.3 |
| Սյունիք **Syunik** | 4506 | 164.0 | 115.1 | 48.9 |
| Վայոց ձոր **Vayots dzor** | 2308 | 69.4 | 28.4 | 41.0 |
| Տավուշ **Tavush** | 2704 | 156.5 | 62.6 | 93.9 |

[2] *Ներառյալ Սևանա լիճը:*
*Including Sevan Lake.*